Թիֆլիզից ուղեկցում էին Թեմիս ս. Առաջնորդն ու անդամ վարդապետը, կարգադրիչ Ցանձնաժողովի անդամների մի մասը և այլ պատգամաւորներ։

Սանահնում ընդունելութիւնը խիստ վայելուչ էր։ Ն. Ս. դիտեց վանքն ու միւս հնութիւնները, որոնց մասին մանրամասն բացատրութիւններ էր տալիս պ. Ստ. Լիսիցեանը։ Վեհը դիշերեց այնտեղ և միւս օրը ուղևորուեց դէպի Ալէքսանդրապոլ, և այնտեղից Անի։ Վերադառնալով Ալէքսանդրապոլ վեհափառը շարունակեց իր ճանապարհը, ամբողջ ճանապարհին ընդունելով բոլոր հայաբնակ վայրերի հասարակութիւններին աղուհացով և ճառերով ու կեցցէներով և հուսկ ուրեմն յուլիսի 26-ին Տիրոջ յաջողութեամբ մուտ գործեց իւր Աթոռանիստը՝ ս. Էջմիածին։

Վեհափառը առոյգ է և ժիր և մեզ վերայ թողեց իմաստալից անձի տպաւորութիւն։

ԼՈՒՐԵՐ

Ազգիս Վեհ. Հայրապետի օծումը, ինչպէս հաղորդել է Սինօդը տեղւոյս մի քանի լրագիրներին, նշանակուած է առաջիկայ սեպտեմբերի 13-ին։

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Թիֆլիսի իւր բնակարանում, Աբաս-Աբադեան փողոց, բաց արաւ գրադարան-ընթերցարան։

Վեհ. Հայրապետը Անի եղած միջոցին պրոֆ. Մառին յանձնել է 600 ռուբլի Անիում կատարուող պեղումների համար։

Մոսկուայի հայ հասարակութիւնը 12000 ռուբլի է ժողովել Էջմիածնում Ազգիս Վեհ. Հայրապետի համար մի վայելուչ վեհարան շինելու համար։

Կառավարութեան հրամանով դադարեցրած է «Գործ» օրաթերթը վնասակար ուղղութեան համար։

Օգոստոսի 1-ից լոյս է տեսնում «Հորիզոն» անունով մի ուրիշ օրաթերթ։

Լոյս տեսաւ նաև «Սուրհանդակ» անունով լրագիր, առ ժամանակ երկուշաբթի օրերը։

Վանայ եկեղեցու թանգարանի վարչութիւնը ձեռնարկել է «Կիրակոս Գանձակեցի» պատմագրի հրատարակութեան։

Ազգիս Վեհ. Հայրապետի Սանահին այցելելը մի բարի գործով նշանաւորելու համար կազմուած է մի ժամանաժողով՝ բաղկացած պ. պ. Սա. Լիսիցեանից, Եր. Լալայեանից, Ի. Ցարութիւնեանից, և Գիւտ աք. Աղանեանից՝ Հաղբատի հինաւուրց նշանաւոր վանքի վերաշինութեան համար։ Մասնաժողովի պատուաւոր անդամ է հրաւիրուած պ. Մ. Արամեանցը, որ խոստացել է և իւր նիւթական աջակցութիւնը։ Մասնաժողովը ներկայանալով Նորին Սրբութեան ամենայն Հայոց Կաթուղիկոսին Սանահնում՝ ստացաւ Նորա օրհնութիւնն ու հաստատութիւնը և թեմիս սրբ. Առաջնորդի հաւանութիւնը։ Մասնաժողովն արդէն սկսել է կարևոր խորհրդածութիւններ կատարել։

«Баку»-ի մէջ կարդում ենք, որ ներկայումս Ռոստովի և Նովոչերկասկի բանտերում գտնուում են մօտ 500 հոգի, որոնք ձերբակալուած են «Դաշնակցական» գործի պատճառով, և բանտերը իւրաքանչիւր շաբաթ լցուում են Կովկասից յատուկ գնացքով բերուող ձերբակալուածներով։—Նոցանից մի քանիսը, ինչպէս երևում է, արձակուելու են գրաւականներով. Մինաս Բեքբերեանին արձակեցին 15,000 ռ. գրաւականով, իսկ գրագէտ Ա. Ահարոնեանը դեռ բանտումն է և ցաւալին այն է, որ նա բանտում հիւանդ է։ Բանտարկեալի որդին գնաց Ռուսաստան, որ միջնորդէ գոնէ թոյլ տալ մասնաւոր հիւանդանոց տեղափոխել նորան։

Թաւրիզից „Русск. Слово" լրագրին հաղորդում են, որ առաջիկայ տարուանից այնտեղ բացւում է հայկական համալսարան։ Հայերի այն ցնորքը, որ ունենան իրանց բարձրագոյն դպրոցը, իրանց հայ գիտնական և կուլտուրական կենտրոնը-իրագործւում է։ Այդ բանը նոցա թոյլ չտրուեց Ռուսիայում և նոքա շինում են Պարսկաստանում։ Ապագայ համալսարանի համար արդէն յատկացրած է յարմարաւոր տուն, մեծ պարտէզով և միլոցներ են ժողովել. համալսարանական հիմնական դրամագլուխ է դրուած 75,000 ռուբլի, որ լուսաւորութեան նպատակի համար կտակել է Թիֆլիս վախճանուած հայ բարեգործ Զուլաբեանը։ Բժշկական ֆակուլտէտի պիտոյքների համար դիտաւորութիւն կայ ընդարձակել Թաւրիզի քաղաքային հայ հիւանդանոցը և կլինիկայի վերածել։